ՏԱՐԱԶ

Ապրիւրի յաւելուած

ՑԵԼԲԱՆ № 282

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 14 կիրակի ապրիլի 16 | տասնեւմէկերորդ տարի 1900

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1900 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆԸ



ԹԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

(Վ. Վ. Բարեաեիսկու)

—

շխանուհին կենդանացաւ պիգմալիոնի արձանի պէս. վերցրեց կլոսով չափ թորշոմած մի վարդ և չրպատասխանելով հարցին, որով դիպլոմատը բնաւ չէր էլ հետաքրքրւում, արտասանեց.

—Ուղո՞ւմ էք վարդ. աղքատների համար է:

Դիպլոմատի աչքերն անհանդիստ այս ու այն կողմն էին նայում. նա, կարծես, խոյս տալու միջոց էր որոնում, բայց վերջը յուսահատելով, բըռնագրօսիկ ժպտաց, հանեց գրպանից մի մաշած թղթաման, վերցրեց հինգ րուբլիանոց թղթադրամ և դողդոջուն ձեռքով տւեց իշխանուհուն և աւելացրեց. «trop heureux, madame!».

Ասենք, անաչառութիւնն պահանջում է նըկատել, որ դիպլոմատը ըստ երևոյթին աւելի երջանիկ կըլինէր, եթէ նրա գրպանը հանգիստ թողնէին. և բարկութեամբ սեղմելով գնած վարդը իր ափում, նա հեռացաւ քիւշքից այնպիսի արագութեամբ, որ միանգամայն անսպասելի էր նրա նիհար ու հիւանդոտերջին:

Գահլիճի միւս անկիւնում տեղաւորւած էր վիճակախաղը. բայց վայ այն վիճակախաղին, հազար տոմսակից մէկն էր ընկնում. իսկ դա էլ մի տարօրինակ, անըմբռնելի, չըտեսնւած բան էր. հինգ օր է լինչ շարունակւում էր բազարը, բայց ոչ ոք չէր կարողացել այդ տոմսակը հանել: Վիճակախաղի սեղանի մօտ գտնւում էին տիկ. Փոն-Նիզերը, կոմսուհի Բելովոդսկայան և վենետկի դեսպանատան քարտուղարի կինը՝ տիկ. Բալացցան: Չէնց այստեղ պէտք է առաւտուր անէր և Փիֆի Փետրշկինան, սակայն նա գերադասում էր ամբողջ ժամանակ բուֆետում նստել և ծխել:

—Խնդրեմ մի տոմսակ տաք, տիկին, դիմեց տիկ. Փոն-Նիզերին մի բաւական անգոյն մարդ հնաձև սիւրտուկով:

—Մէկը, հարցրեց տիկինը կախարդիչ ժպիտ խաղացնելով կարմրացրած շուրթերի վրայ:

—Մէկ հատ,—հանգիստ պատասխանեց գընողը:

Ծախողները և իրանց ասպետները միմեանց նայեցին: Կոմսուհի Բելովոդսկայան շրջեց ապակեայ արկղը, հանեց փոքրիկ խողովակի նման ոլորած մի տոմսակ և ճկոյթի մատը քիչ բարձրացնելով, յանձնեց անյայտ պարոնին: Պարոնը երկար ու ճիգ ճիգերից յետոյ հանեց օղակը, բաց արեց տոմսակը, կիսաձայն, յօնքերը կիտած կարդաց՝ «allegro» և վերջապէս, ոչ մէկին չըդիմելով, հարցրեց.

—Ի՞նչ արժէ:

—Vingt copecks, monsieur—սիրալիր պատասխանեց տիկ. Փոն-Նիզերը:

—Ո՞րքան. կրկին հարց տւեց պարոնը, որ երևի, ծանօթ չէր Բասկինի ու Վոլտերի լեզուին:

—Քսան կոպէկ. շտապեց թարգմանել տիկ. Բելովոդսկայան, դժւարութեամբ զսպելով իր ծիծաղը, մինչդեռ յետևում կանգնած ասպետները ծիծաղեց փռթիկում էին:

Պարոնը հանեց գրպանից կաշեայ մ՛ծ փողամանը և երկար որոնելուց յետոյ գտաւ սևացած մի քսանկոպէկանոց, դրեց սեղանի վրա՛յ ու արագ քայլերով հեռացաւ:

—Ինչ տի՛պ է! արհամարական ծիծաղով ասաց սպան, որ կանգնած էր տիկ. դը Լագրցայի յետևը: Գեղատեսիլ տիկիններն ու իրանց ասպետները բարձրաձայն քրքջացին, որ առնւազն հինգ րոպէ տևեց: Առաջինն հանդարտւեց կոմսուհի Բելովոդսկայան, որ խրատօրէն նկատեց.

—Չարկաւոր չէ ծիծաղել. սա աղքատների համար է:

Չէնց այդ միջոցին միւս քիւշքին, ուր կոմսուհի Փորնոստայևային, իշխանուհի Կրուտիկովայի, մատաղահաս օր. Կաուրովայի և երկու երիտասարդ պարոնների ջանքով ծախւում էին ամենտեսակ bibelots, մօտեցաւ մօտ 55 տարեկան մի գէր մարդ, չափազանց գեղեցիկ հագնւած և շինծու շարժւածքներով: Ընդհանուր արտաքին փայլին, նրան պակասում էր մի բան .. Ի՞նչպէս ասել. մի անբացատրելի բան, որ կարծես բարձր դասակարգի մարդկանց արտօնութիւնն է կազմում:

—Bonjour, comtesse—դարձաւ նա Փորնոստաևային oserai-je vous prier de me donner quelque chose.

Կոմսուհին շատ սիրով և կարծես նոյն իսկ խընդրալիր ժպտաց և փաթաթելով շատ փոքրիկ ծրար, յանձնեց գնողին աւելացնելով.

—Ե՞րբ արդեօք կըտեսնեմ ձեզ ինձ մօտ, Ակիմ Ստեփանիչ.

—Տիկին .. անորոշ մրթմրթաց պարոնը, գոհունակութիւնից կարմրելով, որով ցոյց տւեց, որ ընտիր հասարակութեան է պատկանում: Նա հանեց

*) Տես Տարազ № 13.

ոսկեզարդ լի թղթամանից մի հարուբանոց, դրեց սեղանի վրայ և յարգանքով գլուխ տալով հեռացաւ։

— Oh cent roubles! ո՞վ է դա. հետաքրքրուեց իշխանուհի Կրուտիկովան։

Սա գործարանատէր Բոմախովն է, գիտէ՞ք։ Նրա աղջիկը անցեալ տարի ամուսնացաւ Նիկի Ուրժումսկու հետ, բացատրեց կոմսուհին։

— Ա-ա՜, բացականչեց իշխանուհին ոչ յարգանքի և ոչ էլ արհամարական հայեացք ձգելով հեռացող միլիոնատէրի վրայ։

Ֆիօշքին մօտեցաւ մի աշխոյժ, բաւականին զեղեցիկ, մօտ երեսուն տարեկան կին, չորս ասպետների ուղեկցութեամբ, որոնց մէջ աչքի էր ընկնում կոմս Ջիւնդէն։

—Bonjour, արտասանեց տիկինը քիչ խռպոտ ձայնով, տղամարդու պէս ուժեղ սեղմելով ծախող կանանց ու արանց ձեռքերը — այս բազարը ինչի օգտին է։

Իշխանուհի Գորնուտայևան և Կրուտիկովան անհանգիստ ու շփոթուած հայեացք ձգեցին իրանց ասպետներին. առաջինը շփոթուեց, որովհետև բնաւ անտեղեակ էր թէ ինչ բարեգործական նպատակով էր այդ բազարը, իսկ երկրորդը, թէև գիտէր, բայց շփոթւում էր այդ բացարձակ ասել անչափահաս օր. Կաուրովայի ներկայութեամբ։

— Սիրոյ պատուղների օգտին է, ազատեց տիկիններին դժուարութիւնից անփոխարինելի կոմս Ջի ունդէն։ Կանայք չափից դուրս տրամադիր էին ծիծաղելու, բայց չէին համարձակւում, որպէս զի օր. Կաուրովան չը հետաքրքրքրւի պատճառն իմանալ։

— Այո՛, այո՛, c'est au profit des anfants naturels, — բոլորովին անսպասելի արտասանեց օր. Կաուրովան ի սարսափ տիկինների և ի խնդութիւն ասպետների. և բնաւ չամաչելով իր ասածներից, աւելացրեց.

— Կոմսուհի՛, գնեցէք մի բան։

— Ո՞ւմ մօտ է քսակս. Հարցրեց տիկինը խռպոտ ձայնով իր ասպետներին։ — Ձեզ մօտ է, Ջիւնդէն, մի բան գնեցէք և վճարեցէք. ես գնում եմ բուֆէտի մօտ...

Եւ նա աղմկալի ու սրընթաց քամու պէս հեռացաւ։ Այստեղ, բուֆետումն էին գաղտնի խորհրդական Սորվանցևը, Ֆիֆին, կոմսուհի Բոլգաշևան և սրա աղջիկ Բեբին, ինքը՝ քսանևինն տարեկան Կլեօպատրան, որ իր մօր վերջին անյաջող մտադրութիւնից յետոյ՝ պսակել Նիկի Ուրժումսկու հետ՝ վերջնականապէս ընկել էր բարեգործական բազարներում մասնակցող օրիորդների շրջանը։

— Սորվանցև, կոմսուհուն շամպայն տուէք, դարձաւ սրան մայր Բոլգաշևան, տեսնելով մօտեցող «fամուն»։

Սորվանցևը արդէն պարզում էր իր ձեռքը դէպի սեղան, երբ նրա առաջ կտրեց մի զեղեցիկ սպայ, արտասովոր հմտութեամբ բռնեց շիշը ու հաստատ ձեռքով մի քանի կաթիլ գինի չափազանց փրփրալիր լցրեց երկար անկիւնաձև բաժակի մէջ։ Կոմսուհին համարձակ վերցրեց սպայի ձեռքից բաժակը և մի անգամից պարպեց։

— Ջինդէ, վճարեցէք. ես գնում եմ ծաղկի քեօշքի մօտ։

— Վսեմ գործ է բարեգործութիւնը. փսփսում էր Ֆետիշկինայի ականջում մի գեղեցկատեսիլ թխահեր պարոն։

—Vous m'embêtez,mon cher. նկատեց Ֆիֆին, ծխելով ծխախոտը։ Թխահեր պարոնը բոլորովին շփոթւեց և շարունակում էր նոյն ազդեցիկ փսփսոցով.

— Դուք բարեգործութիւն էք անում և չէք ուզում բախտաւորեցնել մի մարդու, որ տանջւում է ձեր սառնասրտութիւնից. ասացէք, խնդրեմ, երբ եմ ես..

Ֆետիշկինան մի արագ հայեացք ձգեց չորս կողմը և շտապ շտապ արտասանեց.

— Ու՞ր այլ ևս չըկայէք ինձ — այսօր երեկոյեան ժամը իննին ինձ մօտ... ոչ ոք չի լինելու։

Թխահեր պարոնը փայլեց։

— Ի՞նչ գործունեայ էք դուք — և իրաքանչիւր բազարում մասնակցում էք, ասաց պատկառելի դէմքով, համեստ հագնուած, հասակն առած մի կին, դիմելով Ֆիֆիին.

— Pour les pauvres, madame. — երանելի ու անմեղ ժպտով պատասխանեց սա։

— Դուք բարի էք, լաւ էք քաղցրութեամբ գովաբանեց պառաւը. Թող շատ լինին ձեզ պէսները։

— Madame, une tasse de thé, s'il vous plait — ընդհատեց այս խօսակցութիւնը ծերացած իշխ. Ուրժումսկին. — toujours de plus en plus belles! բոլորին գրաւում էք, աւելացրեց նա, գլուխը թափ տալով և ներկած բեխերի տակին ցոյց տալով մի շարք սպիտակ անբնական առամներ։

Տիկին Ֆետիշկինան երևի զգացած ծերունու հաճոյախօսութիւններից, որ քառասուն տարի շրջունակ յայտնի էր մայրաքաղաքի մէջ իբրև ամենագեղեցիկ ու շքեղ ասպետներից մէկը, դիւր գալու համար թափահարեց գլուխն և Ուրժումսկուն մի անզօր հայեացք նետելով, մօտեցաւ փոքրիկ արծաթեայ ինքնաեռին...

— Տասն րուբլիանոց տոմսակներ! սերեայ «Ա» — հնչում էին երիտասարդ ձայներ «petits chevaux»-ի սեղանի մօտ։

— Ցիմմեր խաղ է. երբէք բան չի կարելի տանել. — հայհոյում էր մի ինչ որ պարոն. — մինչդեռ ձիաները վազվզում են կանաչ դաշտում։

— № 5, № 6, «Ս» սերիան. ումն է № 5-ը, որոտում էր կարգադրիչների ձայնը — տուէք, տուէք հետևեալ սերիան։ Չինգ րուբլիանոց տոմսակ, «Բ» սերիան։

— Ջինդէ, ինձ համար մի տոմսակ վերցրէք. ես գնում եմ ճապոնական քիօշքի մօտ, լսեց խռպոտ ձայնը.

— Իշխանուհի՛, մի փունջ մանուշակ. comtesse un verre de champagne! միմեանց ընդհատելով հնչում էին ձայներ։

Բարեգործութիւնն եռում էր... Թարգմ. Ժ. Մ.

Բօէրների գլխաւոր հրամանատար
† Փուբեր

ՀԱՅՑՆԵՒՈՑ

—

Է դու ինչպէս վատ վարուեցիր,
Ես մարդկանցից ծածկեցի,
Բայց ելայ ծով եւ անխըտիր
Բոլոր ծըկանց պատմեցի:
Ես թողի քեզ քարի անուն
Յամօքի վրայ միմիայն,
Բայց անամօթ քո քընութիւնն
Գիտէ ամբողջ ովկիան...

Ջ. Բալուդեան

Անգլիական զօրքերի գլխաւոր հրամանատար
Ռոբերտս

ԿՐԻՒԳԵՐ

—

Կրիւգերը Ծնուել է 1825 թուին, երբ բօէրները Կապի երկրումն էին. իսկ 1835 թուին նա երկար խարազանը ձեռքին իր հօր սայլն էր քշում դէպի հիւսիս, ուր 4 տարի յետոյ, հրացանը ձեռքին Քամի որդոց դէմ անողոք կռիւ է սկսում մղել Աւետեաց երկիրը նոր Իսրայէլի ժողովրդին հնազանդեցնելու համար, և այնպիսի քաջութիւն է ցոյց տալիս, որ շուտով արժանանում է սպայի առաջին աստիճանին, իսկ 16 տարեկան հասակում Ֆելդկորնէտ է դառնում ու 600 հոգու գլուխ անցած քաջապէս նահանջում Փուրբանը պաշարելուց: Նա նախագահ ընտրուեց 1877 թուին բուրգերից յետոյ:

Կրիւգերը խելօք մարդ է. միևնոյն ժամանակ նա յամառ է: Ըն այդ բնական է՝—բոլոր մոլեռանդ մարդկանց յատկութիւնն է դա: Թէպէտ արտաքուստ գեղեցիկ է բայց անկան ճարտասխօսութիւն ունի՝ առանց սեթևեթների, առանց ճոռոմաբանութեան:

Բօէրների մի տեղամասի փոխարկումը

—

Փուբեր

Բօէրների գլխաւոր զօրապետն վերջերս վախճանուած Փուբերն էր, որ հրամանատար էր արևելեան բանակին: Սա Ֆրանսիացի հուգենոտների յետնից էր և զարմանալի կասկածոտ բնաւորութիւն ունէր. ամեն տեղ միայն վտանգ էր տեսնում և միշտ աշխատում էր պատրաստ գտնուել վրտանգի դէմ: Թէպէտ Փուբերը եղել էր Եւրոպայում և մասամբ ծանօթ էր գերմանական զօրքերի կազմակերպութեանը, բայց Նա իր յոյսը ոչ այնքան իր ոյժերի վրայ էր դնում, որքան Աստծու, որի զէնքն էր համարում իր անձը: Նա խիստ ջերմեռանդ էր, կրօնասէր և զօրքերին շարունակ սաղմոսներ էր ասել տալիս, բայց և շարունակ պատերազմների մէջ էր գտնուում: Սկզբում նա իր սպանիչ զէն-

վայրենիների դէմ, որոնց անվնաս կոտորում էր յանուն Աստծոյ, իսկ յետոյ նոյն զէնքը դարձրեց անգլիացիների դէմ: Նա ծնուել է 1839 թուին Կանգոյում (Կապլանդ):

—

Կրոնիէ

Բօէրների նշանաւոր գործիչներից է և Կրոնիէն, արևմտեան բանակի հրամանատարը, որ այժմ գերի է անգլիացիներին: Արտաքուստ նա մի հասարակ, պարզ մարդ է, բարի դէմքով, վստահ մարմնով, բայց միևնոյն ժամանակ խորամանկ, նրա խորամանկութիւնը երևաց նաև այս վերջին պատերազմի մէջ, երբ կարողանում էր անգլիացիներին կարծել տալ, թէ ինքն ամբացած է լերան գագաթին, մինչ ստորոտում անակնկալի էր բերում նրանց, կամ երբ երկաթէ փշաւից թելեր էր քաշում անգլիացիների առաջ... Զարմանալի է նրա ճարպիկութիւնն ու արագաշարժութիւնը. այսօր երեւում է այստեղ, իսկ մի երկու օրից արդէն փուբերի մօտ էր և նրան էր օգնում Բուլլերի դէմ, և դեռ ոչ ոք չիմացած այդ բանը, նա վերադառնում էր իր բանակը:

Կրոնիէ

—

Հայ-բոշաները թափառիկ Թուրքահայաստանում

Դարերից ի վեր, կորցրած իրանց հայրենիքը, հեռաւոր տաք երկիրներից խմբովին գաղթած, թափառում են հայ-բոշաները աշխարհիս ամեն կողմ, ոչ մի տեղ հանգիստ չգտնելով: Այնքան սովորել են սերնդից սերունդ ամբողջ աշխարհը համարել իրանց հայրենիքը, որ չեն կամենում այլ ևս հաստատուն լինել և ապրում են երկնքի թռչունների նման

ազատ, անհոգ ու երջանիկ թէ ցուրտ և թէ տաք կլիմայի մէջ։ Երբ հասնում են մի տեղ, հանգստանում, ժողովում ինչ որ իրանց հարկաւոր է, անմիջապէս շարժում են ինչ որ ունին, մանր տղայոց մտցնում ձմի վրայ բարձած պայուսակի աչքերի մէջ և շարունակում թափառել։ Ահա այդպիսի թափառականութեան մի պատկերն է, որ տալիս ենք այս համարում։ Մեր պատկերը նկարած է բնակիչից և ներկայացնում է հայ-բոշաների ընտանիքը՝ թափառելիս Թիւրքահայկական սահմանագլխի վրայ։

—

Երկրաշարժը Փոքր-Ասիայում

Մինչդեռ մենք Ախալքալաքի երկրաշարժի արհաւիրքով էինք բռնուած, չէինք գիտէիք որ համաբեա նոյն ժամերին (դեկտ. 13, 14, 16, 24 և 25-ին) նոյնպիսի աղէտ է տեղի ունենում Փոքր-Ասիայում։ Այսպէս՝ երկրաշարժը մեծ աւերածութիւններ է արել Այանլիկում, Միւրիվտում, Ուզուն-Քեպրում, Զարնէյում, Ապանում, Տարսոնում, Տրիպոլում և այլն։ Դեկտ. 25-ին երկրաշարժի զօրեղ հարուածներ եղան և Բէյրութում, Աքեայում, Նաբլուսում, Երուսաղէմում և ուրիշ տեղերում։ Քարուքանդ են եղած հարիւրաւոր տներ. վնասը հասնում է միլիօնների։ Սոյն №-ում տպուածը մի տուն է, որ խորտակւել է երկրաշարժի ժամանակ։

—

Դեղարուեստ

Թատրոն-երաժշտութիւն

Վատկի այս անցած շաբաթը էստէտիկ հաճոյքի կատարեալ տօնախմբութիւններ էին։ Օր. Պապայեան Թիֆ. ժողովարանում երեքշաբթի տուաւ իր հրաժեշտի կոնցերտը։ Չորեքշաբթի նոյն ժողովարանում պ. Եակովլև։ Հինգշարթի և շաբաթ Ազն. թատրոնում հանճարեղ դաշնակահար պ. Հոֆման։ Բոլոր երեկոյթներին էլ մեծ բազմութիւն կար և արտիստներին մատուցւեց ցնծութեան աղմկալից ցոյցեր։ Օր. Պապայեան հսկայական քայլերով, մանաւանդ վերջին տարիս սլացաւ և այնքան բարձրացաւ, որ արդէն մի փայլուն աստղ է բեմի համար։ Իր մշակւած դայլայլիկով, արձաթահնչիւն ղօղանջով, չքնաղ ճայնով, նազանի խաղով մօտ ապագայում ախոյեան և մրցակից կը-հանդիսանայ նա պատենտաւոր, մայրաքաղաքի արտիստներին։ Մեծ պասին պ. պ. Զալիապինի, Եակովլևի դաստրոլներին շնորհալի երգչուհին իր խելացի խաղով, գեղեցիկ երգով մեծ առհաւատչեաներ ներշնչեց իր ապագայ փայլուն գործունէութեան։

Օր. Թամարա Տէր-Ստեփանեան, որ օր. Պապայեանի կոնցերտում մասնակցում էր, մի չքնաղ դաշնակահար է։ Համեստ, քնքոյշ նրա ակկորդները ունկնդրին մտորում են, յուզում։

Օր. Պապայեան երգեց Գունոյից, Մասենեից, Ճումանից, Տոմից, Քիւից, Չայկովսկուց սիրուն կտորներ և բացի այդ, պրոգրամից շատ դուրս, րոմանսներ։ Համարեա բացառապէս հայ հասարակութիւն, որ լցրած էր ժողովարանի մեծ դահլիճը, հզօր ցոյցեր արաւ իր սիրելի երգչուհուն, մատուցանելով նրան շքեղ ծաղիկներ։

Պ. Եակովլևի կոնցերտն էլ աղմկալից էր և կոնցերտանտը անհամար թւով երգեր արտասանեց իր երկրպագուների համար, որ նոյնպէս լցրել էին դահլիճը։ Տ. տ. Կրաւէց, Նիկիտսկայա մասնակցում էին այդ կոնցերտին։

Փառահեղ էր զուտ իր մուզիկալ բովանդակութեամբ պ. Հոֆմանի, հանճարեղ դաշնակահարի կոնցերտները, (նրա երրորդ կոնցերտը վաղն է)։ Ընորհակալ պիտի լինել պ. Ռ. Միրիմանեանից, որ նա միշտ, առանց բացառութեան Թիֆլիս է հրաւիրում իսկապէս յայտնի արտիստների (Մազինի, Ռհդեր Fոյրեր, Նիկիտա եւ այլն եւ այլն)։ Պ. Հոֆման դեռ շատ երիտասարդ, հազիւ 24—25 տարեկան, բայց իմաստուն, մտալից, չերաւի հանճարեղ նուագածու է։ Ճստակ, մաքուր ալիքներ մերթ զեփիւռի հետ ներդաշնակ պար բռնած, մերթ խորշակից որոտուող, մերթ իբրև զանգակ ղօղանջելիս, մերթ սոխակի հետ, կրծես գայլայլելիս։ Զգացում, յոյզ, վիշտ և ցնծութիւն՝ Շոպէն ու Ճուման, Մանդելսոն, Վագներ նա այնպէս է արտայայտում, որ ունկնդիրը խորասուզւում է նրանց մէջ և սթափւում, կարծես մի այլ գերբնական աշխարհից եկած, չէ հաւատում թէ լսել է ականջներով մի մատաղ դաշնակահարի, որ իր դաշնակի լարերին այնպէս է ոգի տալիս որ մարդու հոգին խռովում է, հրճւում։ Պ. Հոֆման իր աշխատութիւններից էլ նուագեց հասարակութեան խնդրանօք։ Սրա կոնցերտներին գլխաւորապէս ներկայ է մուզիկալ Թիֆլիսը։

Պ. Ստեփանովի ղեկավարութեամբ զատիկ երկուշաբթի օրւանից սկսել են Ար. թատրոնում ռուս դրամատիկ խմբի ներկայացումները։ Հասարակութիւնն առայժմ այցելում է այդ ներկայացումներին։ Խմբի մէջ աչքի է ընկնում տ. Պասխալովա։ Պ. Բաղրով բաւական առաջադիմել է։

Մեր մշտական բեմի բեկորները թափառում են զանազան քաղաքներում։ Տ. Սիրանոյշն էլ ժողովել է իր շուրջը մի քանի հոգի ընկերներ և հիւսիսային Կովկասում ներկայացումներ է տալիս։ Տաղանդաւոր դերասանուհին մեծ աջողութիւն է ունեցել Բոստովում։ Նրա բենեֆիսին կառքից ձիաները արձակել են և երկոտանիները լծել հռչակաւոր արտիստուհու կառքին։ Ո՞րքան հզօր սիրոյ ապացոյց դէպի մայրենի բեմն ու նրա վաստակաւորները։ Բագւից այսքան մօտ է Թիֆլիսը և չըյաջողուեց կանոնաւոր կազմակերպւած խմբին գէթ մի 4—5 աջող ներկայացման համար երաշխաւորել դերասաններին և հրաւիրել նրանց։

Tigo

—

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Վեհափառ Կաթուղիկոսը չարչարանաց շաբաթը մի փոքր թէև առողջ չէր, այնուամենայնիւ աւագ հինգշաբթի երեկոյեան Վանաց տաճարում կատարեց ոտնալուացի հանդէսը։ Եկեղեցին լի էր անթիւ աղօթողներով, օգը խեղդող և Նորին Օծութիւնը չոգնելով վաստակեց Վեհարան բարձրանալիս անշուշտ մրսեց ու ըստացաւ ինֆլուէնցիա։ Հետևեալ օրերին Վեհի առողջութիւնը թոյլ չըտուաւ եկեղեցի իջնել և բժշկապետների՝ Նաւասարդեան, Բաբայեան, Կարապետեան և այլն, խորհուրդը որոշեց Նորին Վեհափառութեան խընդրել, որ մի քանի օրով շնորհ անէ մեկնել քաղաքից դուրս այգիները։

Բժշկապետների խորհուրդը ընտրեց քաղաքիս արւարձաններից մեկում, Կրճանիսում շնորհունակ կոյս Հրուիփսիմէ Թաւիրեանի սգարակը, որ և երեքշաբթի ամսոյս 11 ին կէսօրից յետոյ Նորին Օծութիւնը ուղեկցութեամբ թեմիս ս. առաջնորդի, մի քանի վարդապետների, քահանաների և բժշկապետների ժամանեց բարեկրօն կոյսի սգարակը, որ շատ վայելուչ պատրաստել էր բարեկրօն տանտիրուհին իր Վեհի համար։

Նորին Օծութեան առողջութիւնը շնորհիւ մաքուր օդի և ջրի ու բժշկապետների անձնուրաց խնամքին՝ այժմ բաւարար է։

ՍԱՀՈՂ ԹՄԲԵՐ

Հասած աղբիւրից տեղեկացանք, որ Թիֆլիսի պաշտաւոր վաճառական Գրիգոր Յակովբեան Բայանդուրեանցը Վեհափառ Հայրիկի 80-րդ Ջուբիլը շնորհաւորելու առիթով յանձն է առել այս տարւանից պաշտպանելու Կարնոյ մօտ գտնւած Կարմիր Վանքի որբանոցում չորս անտէր մնացած որբեր մինչի որբանոցի փակումը: Սրանց պահպանութեան թոշակը, ընդամէնը տարեկան 200 ր., պ. Բայանդուրեանց մտադրւում է Պետերբուրգի այն չարգելի հայ փիլիսից, որ խնամատար են յ՝ւեալ որբանոցին: Մեր կարուց չեղոյ նոյն գումարը տարէց տարի շարունակելու է ի հասոյթ Սանասարեան վարժարանի. ուր պ. Գրիգոր Բայանդուրեանցի անունով մի թոշակաւոր որբ պիտի ուսանի: Կարեւորին ցանկալի է, որ Սանասարեան վարժարանի տան ընդունելի իր հաշւով չիտեալ չորս որբերից ընդունակագոյնը:

Այս թոշակը Սանասարեան վարժարանում պ. Բայանդուրեանցի անունով մշտական դարձնելու համար, բարեւարը պէտք է առանձին կարգադրութիւն անէ:

Այս ամենին նախնական ընթացք տալը յանձն է առել բժշկապետ Ա. Բաբայեանը:

—Ղուտով Թիֆլիս է գալու պրոֆէսոր Գոկուչայև, որը մտադիր է Թիֆլիսում կարդալու մի քանի հրապարակական դասախօսութիւններ:

—Այս տարի Կովկասի շերամապահական կայարանը առժամանակ տարւում է Ղարաքլիսա գիւղը, արքունական անտառները:

—Ապրիլի 12-ից Թիֆլիսում սկսել են գարնանային ձիարշաւները:

—Բագւում նաւթարդիւնաբերող շուշեցի պ. Յովսէփ Դերասիմեան Թումայեանց 40,000 ր. է ընծայաբերել Բագւայ քաղաքին, որ այդ գումարով 35 մահճակալ պարունակող մանկական հիւանդանոց շինի քաղաքը: Ընորհակալութեամբ ընդունելով առատ և վերին աստիճանի օգտակար նպատակի համար այդ ընծայաբերութիւնը, Բագւայ քաղաքային խորհուրդը վճռել է հիւանդանոցը բանալ նուիրատուի՝ ալեկսէյ Յովսէփի Դերասիմեան Թումայեանցի անունով:

—Երկրագործական մինիստրութեան կից սոյն գարնանը ժողով է լինելու Կովկասի ֆիլոկսերային կոմիտեի անդամների մասնակցութեամբ:

—Ապրիլի 12-ին տեղի ունեցաւ քաղաքային վարչութեան և ելևմտական յանձնաժողովի միացեալ ժողովը, քաղաքի փողոցները սալայատակելու համար միջոցներ որոնելու նպատակով, որ Անոնիմ ընկերութիւնը քաղաքին 4% տալիս է 600,000 րուբլի իբրև պարտք:

—Ապրիլի 24-ին տեղի կունենայ Բագւի նաւթարդիւնաբերողների հերթական ժողովը, որտեղ ի միջի այլոց քննելու են գործարաններում վնասւածներին և նրանց ընտանիքին ապահովելու գործնական դէպքերում, նոյնպէս և Ռուսիա արտահանող կերոսինի տուրքը պակասցնելու հարցերը:

—Ի նկատի ունենալով, որ Անգլիական տեղական իշխան ազգաբնակութիւնը ամաչելուց հրաժարւում է ծաղկահատութեան ենթարկել, նախագծում է գիւղական կանանց սովորացնել ծաղկահատութիւն՝ ռոճիկ նշանակելով նրանց:

—Թիֆլիսի Թիւրքաց ընդհանուր հիւպատոսը փոխւում է Ջենովա, իսկ նրա տեղը նշանակւում է Սպէցիայի (Իտալիա) նախկին հիւպատոս Զիա-բէյ, որ արդէն Թիֆլիսումն է և ստանձնել է իր պաշտօնը:

—Թիֆլիսի պոստ-հեռագրական գրասենեակից գանձարանը զուտ օգուտ է ունեցել 237,584 րուբլի:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջերս Ամերիկայի և Թիւրքիայի յարաբերութիւնները սաստիկ լարել են հայկական խռովութիւնների ժամանակ վնասները պահանջելու պատճառով:

—Պարիզի ցուցահանդէսը դեռ ոչ բոլորովին պատրաստ՝բացւեցաւ: Новости-ին հեռագրում են Պարիզից, որ պատրաստի պաւիլիոնները փչանում են թոզից, որ բարձրանում է չը պատրաստած պաւիլիոնները շինելուց: Սակսոնիայի թագուհին այցելել է ցուցահանդէսը:

—Արգայլի դուքսը վախճանւեց Լոնդոնում: Հայերիս լաւ յայտնի է այդ պատկառելի ծերունին: Տարազի միւս №-ում կըտպագրենք նրա պատկերը:

—Կ. Պոլսից հեռագրում է Ռուս. գործ. ապրիլի 12-ին, որ Ալէքսանդրէտում ոստիկանութեան կողմից վիրաւորանքի ենթարկւեց ամերիկական հիւպատոսը երկու հայ ընտանիքի Ամերիկա գնալու պատճառով: Ոստիկանութիւնը չը թոյլատրեց հայերին գնալ Ամերիկա, որոնք վերաբնակւած են այնտեղ: Սպասում են, որ ամերիկական գործերի լիազօրը, այս գործի պատճառով եռանդուն քայլեր կը գործէ:

—Ռուս. գործ. ապրիլի 12-ին Կ. Պոլսից հեռագրում է, որ Վանի վիլայէթում՝ Հէքիարում 400 հայեր մահմեդականութիւն են ընդունել, ասում են՝ այն նպատակով, որ ազատւեն հարկեր վճարելուց:

խմբագիր-հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПРЕВОСХОДНОЕ
МЫЛО
ВЕРА-ВІОЛЕТА
НО ТОЛЬКО
С.-Петербургской
ТЕХНО-ХИМИЧЕСКОЙ ЛАБОРАТОРІИ
Покорнѣйше просимъ не смѣшивать съ подходящими фирмами и непремѣнно требовать слово „ТЕХНО“ и нашу заявленную фабричную марку.
М. 7—3

Իշխանուհի Մարիա Յովհաննիսեան եւ իշխան Նիկողայոս Բասեղեան Երկայնաբազուկ Առղութեանցները եւ Եղիսաբէթ Սարգսեան Միրզոյեանց ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին

ԳՐԻԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆԻ

մահը: Աճիւնը շաբաթ, երեկոյեան ժամը 7-ին: Ուղեւարկաւորութիւնը դէպի Վանքի ուազգ եկեղեցին կիրակի, ապրիլի 16-ին, ժամը 10-ին: Մարմինը հողին կըյանձնուի Թիֆլիսի գաւառի Թելէր գիւղում: 1—1

Տ. Սիրացոյց

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, սրանով յայտարարում է, որ իր ատեանում, 1900 թ. ապրիլի 19-ին կէսօրւայ ժամի 12-ին, աճուրդ է նշանակուած կապալով տալու քաղաքի փողոցները սալայատակելու և փոս տեղերը նորոգելու աշխատանքները 1, 2 և 3-րդ քաղաքամասերում 2,500 քառ. սաժէն, 4, 5 և 5-րդ քաղաքամասերում 2,500 քառ. սաժէն, 7 և 8-րդ քաղաքամասերում 2,500 քառ. սաժէն և 9 ու 10-րդ քաղաքամասերում 5 000 քառ. սաժէն։

Աճրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմանների մասին տեղեկանալ քաղ. վարչութեան շինարարական բաժանմունքում ամեն լի օրերը առ. ժամի 12-ից մինչև 3 ր։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

պատիւ ունի յայտարարելու ի գիտութիւն ընդհանրութեան, որ սոյն ապրիլի 16-ին նշանակւած

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՕՐՆԵՐԻ ՏՄՐԿԱՆ ԸՆԴ. ԺՈՂՈՎԸ

անակնկալելի պատճառներով կայանալ չի կարող և այդ ժողովը նշանակւում է կիրակի, սոյն ապրիլի 30-ին, առ. ժամը 10-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան դահլիճում։ Ժողովի պարապմունքների ծրագիրը, որ հրատարակւած էր „Кавказъ“ լրագրի սոյն ապրիլի 1 թւակիր № 87 համարում, մնում է անփոփոխ։ 1—1

Дозв. ценз. Тифлисъ, 14-го апрѣля 1900 г. Տպարան Կ. Մարտիրոսեանցի Тип К.И.Мартиросіанца Орбел. ул., № 1—